ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԴԵՂԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն տեղեկատվական թերթիկում արծարծվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքի իրականացմանը, նման իրավունք ունեցող բնակչության խմբերին, ինչպես նա& համապատասխան հիվանդությունների ցանկին առնչվող հարցեր: Տրվում է այն բուժական հաստատությունների ցանկը, որտեղից կարելի է անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերել:

Մայիս 2004

## Ո՞ՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԴԵՂԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեն.
1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները,
հաշմանդամ երեխաները (մինչև 16 տարեկան),
Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներն ու նրանց հավասարեցված անձինք,
ծնողազուրկ երեխաները (միակողմանի և երկկողմանի՝ մինչև 18 տարեկան),
բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաները,
ՀՀ պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների անդամները,
հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչև 18 տարեկան),
մինչև 3 տարեկան երեխաները,
50 տոկոս զեղջով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեն.
3-րդ խմբի հաշմանդամները
Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցները,
բռնադատվածները,
միայնակ չաշխատող կենսաթոշակառուները,
միայնակ չաշխատող կենսաթոշակառուներից բաղկացած ընտանիքները (այդ թվում իրենց խնամքին անչափահաս երեխա ունեցող),
30 տոկոս զեղջով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեն.
չաշխատող կենսաթոշակառուները,
միայնակ մայրերի երեխաները (մինչև 18 տարեկան):

## Ո՞Ր ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ Է ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՏՐՎՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԴԵՂԵՐ

Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհիմնարկների միջոցով հիվանդներին անվճար դեղեր են տրվում հետևյալ հիվանդությունների դեպքում.
տուբերկուլյոզ (հակատուբերկուլյոզային դեղեր),
հոգեկան հիվանդություններ (հոգեմետ դեղեր),
չարորակ նորագոյացություններ (հակաուռուցքային դեղեր և թմրադեղեր),
շաքարային և ոչ շաքարային դիաբետ (հակադիաբետիկ դեղեր),
էպիլեպսիա (հակացնցումային դեղեր),
սրտամկանի ինֆարկտ (դուրսգրման օրվանից առաջին 2 ամիսը՝ արյան կորոնար շրջանառությունը բարելավող դեղեր),
պարբերական հիվանդություն (կոլխիցին),
սրտի փականների արատներ (հակակոագուլյանտներ՝ պրոթեզավորումից հետո),
մալարիա (հակամալարիային դեղեր):

## ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԴԵՂԵՐԸ Ո՞ՐՏԵՂԻՑ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր կարելի է ձեռք բերել ամբուլատոր պոլիկլինիկական, մասնագիտացված հիվանդանոցային և դիսպանսերային բժշկական հաստատությունների կողմից:
Շաքարային և ոչ շաքարային դիաբետով հիվանդներին հակադիաբետիկ անվճար դեղեր տրվում է. Երևան քաղաքում՝ ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական հաստատությունների էնդոկրինոլոգիական կաբինետների կողմից, իսկ մարզերում՝ մարզկենտրոնների ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական հաստատությունների

էնդոկրինոլոգիական կաբինետների կողմից, անհրաժեշտության դեպքում օգտագործելով նաև մարզի այլ էնդոկրինոլոգիական կաբինետների ուժերը: Մինչև 15 տարեկան երեխաներին, անկախ բնակավայրից, հակադիաբետիկ դեղերը հատկացվում են դիսպանսեր գործառույթներ իրականացնող մանկական էնդոկրինոլոգիական կենտրոնի կողմից, որը գործում «Հայք» բժշկական կենտրոնի կազմում:
Տուբերկուլյոզով հիվանդներին անվճար դեղերով ապահովումն իրականացվում է. Երևանում՝ Երևանի հակատուբերկուլյոզային դիսպանսերի (հեռ. 625900), իսկ մարզերում՝ Գյումրիի, Վանաձորի, Գորիսի, Կապանի, Վաղարշապատի, Արմավիրի, Արարատի, Արտաշատի, Ալավերդու հակատուբերկուլյոզային դիսպանսերների կամ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների կազմում գործող համապատասխան կաբինետների միջոցով:
Հոգեկան հիվանդությունների դեպքում հոգեմետ դեղերի անվճար բաշխումն իրականացվում է. Երևան քաղաքի մեծահասակ բնակչության համար՝ Երևանի քաղաքային նյարդահոգեբուժական դիսպանսերի (հեռ. 616533), իսկ մինչև 15 տարեկան երեխաների համար՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի կազմում գործող մանկական նյարդահոգեբուժական կենտրոնի կողմից (հեռ. 646003): Մարզերում՝ նյարդահոգեբուժական դիսպանսերների կամ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների նյարդահոգեբուժական կաբինետների միջոցով:
Էպիլեպսիայով հիվանդներին հակացնցումային դեղերով անվճար ապահովումն իրականացվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների նյարդաբանական կաբինետների միջոցով:
Չարորակ նորագոյացություններով հիվանդներին անվճար հակաուռուցքային դեղերով ապահովումն իրականացվում է Կ. Բազիկյանի անվան հակաուռուցքային դիսպանսերի (հեռ. 520355), Ֆ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության գիտական կենտրոնի (հեռ. 287052), Ռ. Յոլյանի անվան արյունաբանության կենտրոնի (հեռ. 283893) և Գյումրու հակաուռուցքային դիսպանսերի (հեռ. 041-34950) միջոցով, իսկ անվճար թմրադեղերով (նաև երեխաների) ապահովումը՝ համապատասխան բժշկական հաստատության ուռուցքաբանի կողմից տրված և այդ հաստատության կնիքով հաստատված թմրադեղերի դեղատոմսերով՝ թմրադեղերի մանրածախ առևտրի լիցենզիա ունեցող դեղատներից, իսկ դրանց բացակայության դեպքում՝ թմրադեղերի պահպանության թույլտվություն ունեցող պոլիկլինիկաներից:
Մալարիայով հիվանդներին հակամալարիային դեղերով ապահովում են տարածքային հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության կենտրոնները:
Պարբերական հիվանդությամբ տառապող հիվանդներին անվճար դեղերով (կոլխիցին և փոխարինողներ) ապահովում են. 18 տարեկան և բարձր հիվանդներին՝ Թիվ 1 համալսարանական կլինիկական հիվանդանոցին կից դեղատունը, մինչև 18 տարեկան երեխաներին՝ Հանրապետական մանկական հիվանդանոցի պարբերական հիվանդության ուսումնասիրման կենտրոնը (հեռ. 236883):
Երիկամի փոխպատվաստումով հիվանդներին իմունադեպրեսանտներով անվճար ապահովում է ՀՀ Առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնի դեղատունը (հեռ. 470621) և «Արաբկիր» բժշկական կենտրոնը (հեռ. 238089):
Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող անձինք ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություններ են ներկայացնում անձնագիր (երեխաների համար ծննդյան վկայական) և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ սոցիալական խմբին պատկանելությունը հաստատող փաստաթուղթ:
Ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր հատկացվում են բժշկական հիմնավորված ցուցումների դեպքում, ըստ դեղատոմսի, որը տալու իրավունք ունեն տեղամասային թերապևտը, տեղամասային մանկաբույժն ու ընտանեկան բժիշկը, ինչպես նաև տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության նեղ մասնագետները:

Դեղատոմսերը տրվում են բժշկի անձնական կնիքով ու ստորագրությամբ, ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության դրոշմով և տվյալ բժշկական կազմակերպության կնիքով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՆԵՐՈՎ


ք. Երևան, Նալբանդյան 7 , բն 2;
հեռ/ֆաքս. 223786, 540199, էլ. փոստ՝ yerevan@ayla.am
ք. Գավառ, մարզպետարանի շենք, 4-րդ հարկ, հեռ/ֆաքս. (064) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am:
ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72,
հեռ/ֆաքս (085) 62511, էլ. փոստ kapan@ayla.am
ք. Վանաձոր, Վարդանանց 82, բն. 1;
հեռ/ֆաքս. (051) 22317, էլ. փոստ՝ vanadzor@ayla.am:
ք. Գյումրի, Տիգրան Մեծի փող. 1 բն. 2;
հեռ/ֆաքս. (041) 38236, էլ. փոստ gyumri@ayla.am:
ք. Իջևան, Մարզպետարանի շենք,
հեռ/ֆաքս. (063) 62499, էլ. փոստ ijevan@ayla.am:
ք. Գորիս, Մաշտոցի փող. 3, 2-րդ հարկ.,
հեռ./ֆաքս (084) 25861, էլ. փոստ goris@ayla.am:


Նաև կարող եք այցելել ՀԵԻԱ վեբ կայք www.ayla.am և ՀՀ առողջապահության նախարարության վեբ կայք՝ www.arminhealth.am հասցեներով:


Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից՝ Փրայսուոթերհաուսքուփերի և ՀՀ Կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ Միացյալ Թագավորության Միջազգային Զարգացման նախարարության կողմից տրամադրված միջոցների հաշվին: